

զերական գործունեութեան և մարմնի գործակա-
տարութեան վերայ՝ բժշկական գիտութեան միջ-
նորդութեամբ, ցանկանալով ընդհանուր և ար-
տաքին բարօրութեանց վերայ՝ իրաւագիտու-
թեան միջնորդութեամբ, Իսկ ճշմարիտ կրթող
եղանակը այն է, որ նախ բուն աւարկաները ներ-
կայացուած են արտաքին զգայարանքներին, և
յետոյ զրգուռած ներքին զգայարանքները ստի-
րում են նորից արտայայտել և արթնացնել այն
կերպաւորութիւնները, որոնք ստացուած են ար-
տաքին զգայարանքների զրգուրութեամբ, արտայայ-
տել և արթնացնել ասում եմ՝ որպէս ի ներ-
քուստ յիշողութեան միջնորդութեամբ, նշնակէս
և յարտաբուստ ձեռքերի և լեզուի միջնորդու-
թեամբ, և անց այս կատարուեցաւ, ապա երևում
է ողին, բաղդատում է, կշռում է ամենայն բան
ուշի ուշով և հիմնովին, որպէս զի ճիշդ գատ-
ղութիւն անէ, Աւերջապէս՝ երևում է կամբը,
որը մարդկային էակի զեկալար կարող է կոչուել,
և սովորում է իրաւացի տարածել իւր իշխանու-
թիւնը ամենայն բանի վերայ:

Աւսումնարանների երրորդ զանազանութիւնը
այն կլինի, որ ստորին ուսումնարանները, այսինքն
մօր և մայրների լեզուի ուսումնարանները, երկսեռի
երեխաներին են վարժում. իսկ Լատինական
ուսումնարանը առաւելապէս կրթում է այնպիսի
պատանիներ, որոնք կամենում են դառնալ փոքր
ինչ առաւել՝ քան արուեստաւոր, այնինչ ճե-
մարանը նշանակուած է ապագայ ուսումնական-
ների համար, որպէս զի եկեղեցին, թագաւորու-
թիւնը և ուսումնարանը հմուտ մարդկանց պակա-
սութիւն չըզգայ:

Աւսումնարանի այս չորս բաժինը շատ իրաւա-
ցի կլինի համեմատել տարուայ չորս եղանակների
հետ. մօր ուսումնարանը գարունքի նման է, մայ-
րների լեզուի ուսումնարանը՝ ամառուայ, զիմնա-
ղիան՝ աշունքի, իսկ ճեմարանը՝ ձմեռուայ:

Մօր ուսումնարանում սերմեր սկսում են բուս-
նել և առաջին ծաղիկները երևալ. մայրների լեզուի
ուսումնարանում՝ աճում են հասկեր և պտուղ-
ներ, որոնք ժողովուրդ են զիմնադիւմ, և զա-
նազան պիտոյքների համար գործ զրուում են
ճեմարանում:

Մանուկների այս կրթութիւնը կարելի է բաղ-
դատել այգեգործութեան հետ. Մանկութեան ա-
ռաջին վեց տարին տալիս է խնամատարութեամբ
աճեցուցած մատաղ բոյսեր, որոնք աստիճան առ
աստիճան մեծացնում կամ ընդդայնացնում են
խրեանց ստերը և արմատանում են. Տղաները
նման են փորրիկ ծառերին, որոնց վերայ արգէն
զարգացել են մեծ ճիւղեր և կոկոններ. Պատա-
նիները (18 տարեկան), որոնք արգէն լեզուներ,
զեղարուեստներ և ճարտարութիւններ ուսել են,
նմանում են առատածաղիկ ծառերին. Իսկ 24
տարեկան երիտասարդները, ճեմարանական գիտու-
թիւններով զարգարուած, նմանում են պտուղ-
ներով բեռնաւորած ծառերին:

* *

ՊՕԼԿՈՎՆԻԿ ՖՐԻՑ

(Շուրանդուրիւն և վերջ)

Մէկ երեկոյ ես շատ խաղացի եղբայրներին և
քոյրերին հետ և հոյնեցուցը խիստ խոր քննցի՝
ինչպէս որ մօտայ անկողինս. Ասում են, որ երազ-
ները յայտնում են մեզ մեր ապագան, և որ մեր
հոգին բաժանուելով մեր մարմնիցը ունենում է ըն-
դունակութիւն պարզել մեզ այն, որը զարթուն
ժամանակը մեզինց ծածկիւմ է լինում. Արեւ-
լի է, որ այդ ուղիղ է, բայց ես գոնեա այն որը չը-
փորձեցի նախատեսութիւնը իմ հոգուս. Դեռ մին-
չև հիմայ պարզ միտս է այն ժամանակվայ երազը՝
Ինձ երևում էր իբր թէ ես խաղ էի անում իմ եղ-
բայրներին և քոյրերին հետ, և կարծեա թէ Տու-
տուն մեր խաղերին հաղորդակից էր. Ինձ երևու-
մեր, որ ոչ դր իմ ազգականներից չի զգում դէպ
ի նա այն ատելութիւնը, որն որ այնքան սարսա-
փացնում էր ինձ արթուն ժամանակս, ընդ հակա-
ռակը նոքա սիրում էին իմ խեղճ Տուտուն և իմ
հոգիս լողում էր ուրախութեան մեջ, և Լիացած այդ-
քան քաղցր տեսարանով՝ ինչ ընկայ հօրս զիրկն,
և արտասուելով շնորհակալութիւն արեցի նորան
ցոյց տուած սիրու համար. Յանկարծ՝ սաստիկ ձայն
ընկաւ իմ ականջս, ես զարթնեցի և վեր թռայ
յանկողնիցս. Իմ առաջին կանգնած էր հայրս

Բարեկամներ երևումը նորա երեսի ամեն զծերի վերայ. ձախ ձեռին բռնած էր փառփած լսարանը, աջումը հանած թուրը. Հեռուից լսեցի ես տխրալի ձայն, որը որ փոքր առ փոքր լծողանումը. Աս ճանաչեցի ձայնը իմ խեղճ Տուտուի. Աս երկնչելով նայեցի հօրս վերայ. «Աս չ'կարողացայ սպանել անիծած կապիկին» ասեց նա, «յոյս ունիմ սակայն, որ նա սրանից յետոյ էլ չի կարիլ քո քուներ»։ Մայրս մտաւ սենեակը. «Ի՞նչ է նշանակում այս՝ դուայ նա, Քրիշի անկողինը արիւնստ է...»։ «Ոչինչ չկայ, պատահականեց հայրս, նոր սենեակի մօտով անցկենալիս, ես լսեցի, որ մէկը բաց է անում լուսամուտը, ես նայեցի դռնիցը, և լուսնեակի լոյսին տեսայ մեծ կապիկին, որը կանգնած էր Քրիշի լուսամուտի մօտ. Աս փաղեցի սենեակս, վեր առայ թուրը և լսարանը, և հասայ այն բոլեկին, երբ կապիկը բաց էր արել լուսամուտը և մեկնել էր թափը դեպի Քրիշը. Քանի ուժումս կար՝ խփեցի ես թրովս, և կտրված թափը թռաւ մի կողմը, իսկ կապիկը փախաւ անտառը. Կարծումեմ, նա էլ չի ցանկանալ գալ Քրիշի մօտ»։ Արկար ժամանակ ես ուշքի չէի գալիս և չէի հասկանում ինչ էր լինում՝ հետո. Հօրս պատմութիւնը բացատրեց. . . սարսափելով նայեցի անկողինիս վերայ, կտրած թափը իմ խեղճ Տուտուի ընկած էր իմ ոտներինս կողմը. . . կատաղութիւնս բռնեց, Հայրս թուրի ծայրովը բարձրացրեց թափը և քցեց նրան բաց արած լուսամուտիցը։

Միտս չէ. նրանից յետոյ ի՞նչ պատահեց հետո. կարծումեմ, որ ես ուշափառ եղայ. . . Միւս օրը հայրս և մայրս ամեն կերպիւ աշխատում էին փախցրնել ինձ տանջող արամուսիւնս. բայց ես չէի պատասխանում նոցա փայփայանքներին. Իմ օրուս մեջ ծնվել էր այնպիսի մի զգացմանք, որը ինձ հեռացնում էր նոցանից. Աս կարծումեմ, որ ես էլ այնպէս չէի սիրում իմ հօրս. . . Աս չէի կարողանում չ'տեսնել նորա մեջ իմ խեղճ Տուտուին խրկողին, որին որ ես սովորել էի պատուել ինչպէս իմ բարերարին։

Արեկոյան ես դուրս եկայ դռան առաջը. յիշատակը երեկոյս օրուայ սղմեց իմ սիրտս. Աս կամեցայ ծծել մարութ օդ. տափումը տան առաջի՝ մեր տան մեծ շունը խաղ էր անում մէկ առարկայի

հետ, որը որ ես չ'կարողացայ զանազանել. Աս ինքս չը հասկացայ, ինչո՞ւ. համար դուրս ընկաւ կանչել շանը. բնիւ նոյն բոլեկին նա բերեց ինձ մօտ բերնումը բռնած կոծած թափը իմ խեղճ Տուտուի. Աս ճանաչեցի նորան և ուշափառ ընկայ հօրի վերայ. Այս տեսուր անցքը արեց խոր տալաւ. բութիւն իմ բնութեան վերայ. Աս թողեցի իմ երեկոյութիւնս. երեկոցոյ խաղաղքները երբեք չէին գրաւում ինձ. Աս կարգում էի լաւ. բայց երբ որ հանդատութեան ժամերին եղբայրներս և քոյրերս ուրախանում էին իրանց տարիների յարմար խաղերով, ես նստում էի միայնակ, տեսուր մտածողութեան մեջ, և բոլոր աշխատանքը իմ ծնողաց ինձ ուրախացնելու համար՝ դուր էին. Իմ խեղճ Տուտուից տեղեկութիւն չունէի և չէի խմանում. արդեօք նա սաղ մնաց մեր վերջին տեսութիւնից յետոյ՝ թէ չէ։

Այսպէս անցկացաւ մէկ քանի տարի. Իմ քոյրերս գնացին մարդի, և իմ եղբայրներս մտան ծառայութեան մեջ. Աս տանեւ իմ տարեկան դասայ, երբ որ իմ հայրս փաղճանեց, յետոյ մայրս էլ շուտով մեռաւ. նորա քանակից, ու ես մնացի մենակ իմ ցաւիս հետ. Աս փախչում էի թարեկամներից, բոլոր հարեաններս ինձ ճանաչում էին լուս. Քրիշիս անունով։

Իմ ժամանակս անց էր կենում կարգալու և պղծեղանութեան մեջ. Աս գնում էի ման գալու միայնակ. ուսիս քցած կար հրացան, բայց միայն նորա համար, որ բոլոր բնակիչները Բորնէօ կղզու հրացանովն էին մանգալիս. Միայն այս միայնակ մանդալու ժամանակը, երբեք չ'սրտահեց, որ ես իմ զենքը դրած ածեմ. Հասա անգամ ես մանուսի անտառի խորքը, բայց այն տեղ ման էի գալիս առանց երկիւղի. Կարծեմ իմ և սարսափելի միս բնակիչների համար կապիկների մեջ դրված էր կապակցութիւն, որը արդեւումը նոցա վրայ տալ ինձ. Մէկ անգամ ես նստեցի հանգստանալու կոկոսի պուղդի ծառի տակ. Աս լսեցի խշխշոց, որը լավեց ամենաբարձրիցը ծառի. Աս բարձրացրի գլուխս և տեսայ մեծ կապիկին, որը ծանր վեր էր գալիս դեպի ինձ. Այս տեսարանը, որը որ ամեն մէկ ուրիշին կրեւեր սարսափանք, ինձ իսկի չ'ովախացրեց. Աս երկար սկսեցի նայել, իմ սիրտս ստատիկ խը-

փումը . . . Եւ նկատեցի, որ կապիկը չունէրմի լիմֆը և իմ բոլոր կապիկներս անցկացան, այն Տուտուն էր Խեղճ՝ կենդանին ինձ ծանաչեց. նա քցեց իրան զեպի ինձ, ճ՛նչումը, լիմֆոտումը և ամեն կերպիւ աշխատումը ցոյց տալ ինձ իրոյ օւրախութիւնը. Եւս պատասխանեցի նորա փայտաշամբին, և չկարողացայ սրահել իմ արտասուներս՝ տեսնելով նորան փնտաւած, և միտս բերելով՝ որ նորա սէրն է զեպի ինձ պատճառը նորա անբաղատութեան:

Եւս խնամումեմ, որ դուք չէք դատապարտել ինձ եթէ ես խոտոտօւմեմ, որ այս տեսութիւնը ես Համարեցի ինձ Համար ամենամեծ երջանկութիւն. Զրկեմ ծնողիցս, բաժանեմ ազգականներից, չունենալով ոչ բարեկամ, ոչ ծանօթ, կարող էի արդեօք ես լինել Հաւատար զեպի այդ բարի աշխատունը, որը ինձ Համար այդպէս խիստ փնտաւել էր, և չ՛նայելով նորան, սիրումը ինձ առաջվայ ջերմութեամբ. Ամեն օր ես գնումէի անտառ իմ խեղճ Տուտուն տեսնելու. Եւս տեսնումէի նորա մէջ միպնակ կենդանի, որը ունէր ինձ Հետ մասնակցութիւն, և իմ սէրը զեպի նա օր ըստ օրէ աւելանումը:

Թարգմանեցին Ռոսերենէն

Արտատմ. (Եւս) Եւս Եւս.

Վ. Եւս Եւս Եւս Եւս.

Տէգրան Սէրգէյեւ:

ՀԱՅԵՑՈՒՆԻՍ

ՌԻՍՈՒՄՆԵՐԵՆԵՑ ՎԵՐԵՑ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿՈՂՄԱՆԷԼ

Պ. Վ. Խրիստի" Ռուսաւարանաց ազգեցութիւնը առողջութեան վերայ" խորագրով մի աշխատութիւնը տպուեցաւ ի Ս. Պ. բուրգ անցեալ 1870 թմին. Այս աթիւ բժշկապետ Պ. Պրիստիով՝ Կաթիւ Լրագրոյ 126 Համարում տպեց "Հայեցումներ Ռուսաւարանաց վերայ բժշկական կողմանէ" վերնագրով ընտիր և օգտաւետ մի յօդուած,

որպիսին մեր Ազգ. և Հոգեւ. ուսումնարանաց և դպրոցաց իսկ ըստ բաւականին կարեւորութիւն ունենալոյն Համար իղձ կալայ թարգմանել և ամառ դրոյս միջոցաւ սիրելի Ազգայնոցս Հաղորդել՝ միանգամայն Ռուսաւարանաց և դպրոցաց Հոգաբարձուաց ևս ուշադրութիւնը յատկապէս հրաւիրելով:

Ահաւասիկ Պ. Պրիստիովի յօդուածը:

Բժշկականութեան նպատակն ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդոյս կեանքը առողջ և երկար պահելը. Այս պատճառաւ ևս այնպէս կերել լիմֆ երկրիս վրայ բժշկականութիւնը որպէս բարձրութեան ամենարարձր արհեստ՝ անպատճառ եթէ Հնար լինի՝ պարտ է ուսուցանել զիմնադիմանքում, զիշխութիւն Ռուսաւարաններում և ճեմարաններում. Ի վերայ այս ամենայնի՝ այս բժշկականութեան կանոնները ի նկատի չունենալով՝ մէկ օր և իցէ օտարօտի Հակադրութեան խրեանց ցանկութեան և նպատակին Հասնելու Համար՝ ծրնողք և մանկավարժից մեծ մասը ոչինչ չեն խրնայում խրեանց մանկանց մօտաւոր զարգացման Համար, և խրեանց նպատակն առաջ տանելուն Համար ամենայն տեսակ առատ նուիրատուութիւնը կանեն, և վերջն էլ որպէս ծնողք՝ նշնայէս և մանկավարժք խրեանց մանկանց զեղեցիկ նշանադրաց վրայ կհարաւանան. Բայց նորա չեն նրկատում, որ ուսանողներից շատերը խրեանց զեղեցիկ ուսման Հետ այն տեսակ երկարատե ցուր են ստանում, որ նոցա Համար դառնում մշտական ուղեկից գէղ ի մահը (կենաց վախճանը). Եթէ մեր երեխանց Հասակը Համաձայնէր իրենց ստացած ուսմանը և մօտաւոր զարգացմանը, այն ժամանակ մեր օրիորդները չէին վերջացներ խրեանց ուսման ընթացքը պրագմենով՝ զեղին և կանանչ զոյնը երեխաներին փայլելով, և նշնայէս մեր տղայքը 18 տարեկան Հասակին մէջ չէին զանգատել (խրեանց) մէջքի (թիկան) ցաւոյն վերայ. Այս տեսակ մտածմունքները կհնանին մարդոյս մօտաց մէջ Պ. Ռ. Վ. Խրիստի տետրակի ընթերցման ժամանակ. Այս ծանուցումը գրել էր Պրուսացոյց ազգային լուսաւորութեան, հոգեւոր և բժշկական գործոց նախարարի հրամանաւ. և արդարեւ այս աշխատութիւնը ուշադրութեան ար-